

Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)
Պատմ. գիտ. դոկտոր

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՈՒՄ*

Բանալի բառեր – Հայկական լեռնաշխարհ, Ծոփք, Միջագետք, Շումեր, հնդեվրոպական–հայկական արմատներ, արադական, Խեթական արձանագրություններ, ավանդազրույց, հավատալիք, մերձեփրատյան ճանապարհ, առասպելաբանական, դիցանուն, արևապաշտ, արծվաթև, առյուծագլուխ, Սինամահավք, Զմռուք դուշ:


Արևելյան և Արևմտյան Եփրատների միախառնման վայրից հարավ՝ հին Ծոփքի տարածքում գտնվող Կապանի (այժմ՝ Քերան) շրջանում կատարված պեղումներից (1960–1970–ական թթ.) պարզվեց, որ այստեղ գտնվել է շումերական Ուրուկ–IV մշակույթի (մ.թ.ա. 3500–3100 թթ.)¹ մարդկանց գաղթօջախ: Ըստ Զ. Մելարտի՝ նրա բնակիչները այստեղ հայտնվել էին Արդանա–Մադենի և շրջակայքի պղնձի և արծաթի հանքերից օգտվելու նպատակով²: Անկասկած, նրանց հետաքրքրել են նաև տեղի անտառները, որոնց ամուր բնափայտով երկնապաշտ ծառերը անփոխարինելի շինանյութ էին նավաշինության, տաճարաշինության և պալատաշինության համար: Կասկած չկա նաև, որ շումերներն այստեղ հասել էին մերձեփրատյան ճանապարհով: Վերջինս հարմար էր ավանակների քարավանները (ուղտերի քարավաններ դեռևս չկային) ջրով ապահովելու համար, մանավանդ որ մ.թ.ա. III հազարամյակում Ասորական տափաստանը հատող և Թադմորով (Պալմիրա) անցնող ճանապարհի օգտագործման մասին տվյալներ գոյություն չունեն³:

Մերձեփրատյան ճանապարհով ավելի վաղ Հայկական լեռնաշխարհից հարավ են արտագաղթել նոր, արգավանդ հողեր որոնող մեր այն նախնիները, որոնք Շումեր են հասցրել լեռների և լեռնային շրջաններում

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2015:
1 Տե՛ս **Khazai Khosro**, Les grandes étapes de l'archéologie mesopotamienne, "De Sumer a Babylone Collections du Louvre", Bruxelles, 1983, էջ 21.
2 Տե՛ս **Мелларт Дж.**, Торговля и торговые пути между северной Сирией и Анатолией (4000–1500 гг. до н. э.), " Древняя Эбла (Раскопки в Сирии)", М., 1985, էջ 23–24.
3 Տե՛ս **Кленгель Х.**, Архивы Эблы и история Сирии: проблемы и перспективы, նույն տեղում, էջ 208:

ՎՎԻ համահայկական հանդես
Ը (ԺԳ) փարի, թիվ 1 (53) հունվար–մարտ, 2016

ծագում առած իրենց աստվածների պաշտամունքը: Պատահական չէ, որ շումերների լեզվում KUR-ը ոչ միայն «լեռ» էր նշանակում, այլև «լեռնային երկիր» և «երկիր (ընդհանրապես)»: Պատահական չէ նաև, որ Շումերի՝ տափարակ այդ երկրի գերագույն աստված Էնլիլը «բնակվում էր» Երկինքն ու Երկիրը միավորող բարձր լեռան վրա, որ Էնլիլն ինքը կոչում էր KUR.GAL//«մեծ լեռ», իսկ նրա պաշտամունքի կենտրոն տաճարը Նիպուրում կոչվում էր E.KUR//«լեռ տուն, լեռան տուն»⁴:



Շումերների ծագմանն անդրադարձած Ս. Սարդարյանը գրում է. «Ենթադրվում է, որ նրանք ծագում են լեռնային ժողովուրդներից՝ հավանաբար իջած դեռևս ուշ Նոր քարի դարի ժամանակ Հայկական լեռնաշխարհից»⁵: Իհարկե, անվանի հնագետը չէր կարող վերջնական որոշում կայացնել լեռնցիների էթնիկական պատկանելության վերաբերյալ, քանի դեռ գոյություն չունեին մի շարք գիտաձյուղերի ընդգրկումով մշակված ամբողջական տեսություն Հայկական լեռնաշխարհը և հարակից լեռնային շրջանները հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը լինելու վերաբերյալ⁶:

Հայկական լեռնաշխարհից հարավային Միջագետք և հակառակ ուղղությամբ տեղի ունեցած բնակչության վաղագույն տեղաշարժերի իրողությունը իր վիպական արտացոլումն է գտել հին Ծոփքի տարածքի հայրության ստեղծած «Միքոս» ժողովրդական վեպում: Ըստ վեպի՝ Հարավային Միջագետքի «Բաղ թագավորի տեղ չոլիստան (տափաստան) էր, ամառ ձմեռ շոգ էր», և երբ նա «մի լեռան տակ չատր (վրան) գարկեց... քուլի (բոլոր) մարդիկ էկան. չատր չատրի վրա է, սխլաթ (խիտ) էղավ»⁷: Ուստի

4 **Авдиев В.**, История древнего Востока, Л., 1953, с. 105.

5 **Սարդարյան Ս.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 227:

6 Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984.

7 «Միքոս», Վաղարշապատ, 1896, էջ Դ: «Միքոս» ժողովրդական վեպը պատմել է Ծոփքի Չարսանջակ գավառի Իսմայելցիք գյուղի բնակիչ 80-ամյա Մինաս Բաբարը, գրի է առել բանահավաք Սարգիս Հայկունին: Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք երկրորդ. միջնադար, Եր., 1981: Այս աշխատությունից ենք քաղում «Միքոս»-ի վերաբերյալ հիմնական տեղեկությունները:

նա որոշեց իր համար մի քաղաք կառուցել: Յոթ տարվա մեջ բաղինցի վարպետ Մոքոսի գլխավորությամբ 40 շինարարներ կառուցում են Բաղ-դատ քաղաքը (ըստ երևույթին նախկին՝ մոռացված անունը փոխարինվել է **Բաղդատ**-ով սրա և **Բաղ** անվան նմանահնչունության պատճառով): Մոքոսի ծննդավայր Բաղինը Ծոփքի Պաղնատուն գավառի Պաղին բերդն է⁸: Մոքոսը քաղաքներ, բերդեր ու պալատներ է կառուցել նաև Միջագետքը լքած և Հայաստանում թագավորներ դարձած Բաղի 12 որդիների համար: Գր. Գրիգորյանը ուշադրություն էր դարձնում վեպում անբացատրելի մնացած այն հանգամանքի վրա, որ սրանցից ոմանք «Բաղի տղաները լինելով հանդերձ, հայեր էին»⁹: Բացատրությունը կարող է հետևյալը լինել. դրանք ներկայացուցիչներն էին ավելի վաղ Հայկական լեռնաշխարհից Շումեր արտագաղթած հնդեվրոպական իշխող տարրի. հմմտ. **Բաղ** և նախասեմ. ba'ḏ>աբաղ. bēlu «տեր, տիրակալ» (իսկ **Բաղդատ**-ը այլ ծագում ունի՝ իրան. *baga-dāta «աստվածատուր» հմմտ. **Բաբելոն** <աբաղ. *bab-ilu «աստծու դուռ»):

Ժողովրդական այս վեպի համաձայն՝ Բաղի որդիներից Սինամի նստավայրը Սինամուտն էր (հետագա Խարբերդը)՝ այդպես կոչված Սինամ թագավորի անունով¹⁰: Այս թագավորի անունը հայտնի է նաև իր որդու մասին պատմող և «Մոքոս»-ում տեղ գտած մի ավանդությունից: Ըստ դրա՝ «Սինամ թագավորի որդին հաճախ լողալով անցնում էր Եփրատը (Արածանին - Ս.Պ), ստորերկրյա ճանապարհով բարձրանում մոտակա բերդը, տեսնում իր հարսնացուին և նույն ճանապարհով հետ վերադառնում: Ասում են, թե թագավորագնի հարսնատեսական այդ այցելությունների պատճառով է, որ գյուղը կոչվել է «Հարսեկ»¹¹: Ավանդությունը ժողովրդական ստուգաբանության միջոցով Չարսանջակի Հարսենկ գյուղի անունը բացատրելով հանդերձ, արձանագրել է Սինամ թագավորի և նրա շրջապատի մարդկանց մասին ավանդագրույցների տարածված լինելու փաստը ոչ միայն Արածանիի ստորին հոսանքից հարավ գտնվող Խարբերդի, այլև նրանից հյուսիս գտնվող Չարսանջակի շրջանում:

Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում **Սինամ** անվան, ուրեմն նաև Սինամ թագավորի շուրջ հյուսված ավանդագրույցների հնության մասին կարելի է դատել՝ հիմք ընդունելով Հայկական լեռնաշխարհին վերաբերող սեպագիր վաղ աղբյուրների հաղորդած հետևյալ տեղեկությունները: Աքադի Նարամ-Սուեն թագավորը (մոտ մ.թ.ա. 2236-2200 թթ.) Senaminda//Senaminda անունով երկիր է հիշատակում մեր լեռնաշխարհում և նրա մոտավոր տեղադրությունը բացահայտում իր արձանագրության այս տողերում. «Տարին, երբ Նայամ-Սուենը հասավ ակունքները Տիգրիսի և Եփրատի, պատերազմում հաղթեց Շենամինդա երկրին»¹²: Խոսքը Արևմտյան

8 Տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 76, 107:

9 **Գրիգորյան Գր.**, նշվ. աշխ., էջ 238:

10 Տե՛ս «Մոքոս», էջ 4, **Գրիգորյան Գր.**, էջ 239, 250:

11 «Մոքոս», էջ 6, **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 199:

12 Տե՛ս **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քր. ա. երրորդ հազարամյակում, Եր., 2005, էջ 156: *Sinaminda-ի նման-inda/-anda տեղանվանակերտ վերջածանցով կազմված տեղանուններից են. Հունաստանում՝ Κήρινος, Κόρινθος, Λαδβύρινθος, Σάηινθος, Πύρανος և այլն: Տե՛ս **Գեորգիև Վ.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с., 88, 96), Հայաստանում՝ Երինդ//Իրինդ, Հարանդ,

Տիգրիսի և Արևմտյան Եփրատի մասին է: Հիշատակված երկրանվան Տenam-//Senam-//Sinam հիմքը առկա է Հայկական լեռնաշխարհի նույն՝ հարավարևմտյան մասում, խեթական արձանագրությունների հիշատակած Sinamuya//Sinamuya տեղանվան մեջ¹³: Սա կազմված է -uya տեղանվանակերտ վերջածանցով այնպես, ինչպես նույն հիմքից -inda վերջածանցով կազմված՝ *Sinaminda-ն, իսկ համարժեք **-ուտ** վերջածանցով՝ **Սինամուտ**-ը (հմտ. **Արջուտ, Լորուտ, Կառնուտ, Տանձուտ** և այլն): Խեթական արձանագրությունների հիման վրա Սինամուվա բնակավայրը տեղորոշում են Իսուվա երկրից (հնագույն Ծոփքը) արևմուտք, նրան հարող շրջանում¹⁴:

Ամենայն հավանականությամբ, Սինամինդան եղել է Արևմտյան Տիգրիսի և Արևմտյան Եփրատի ավազանները միմյանց կամրջող հնագույն Ծոփքի գլխավորությամբ ստեղծված ցեղամիության՝ իրենց 12 (եթե հավատ ընծայենք «Մոքոս»-ում բերված այս թվին) ցեղապետ-արքաներով: Ըստ «Մոքոս» վեպի՝ Սինամուտը, այսինքն՝ Խարբերդ-Հոռեբերդը¹⁵ հիմնադրվել է այնտեղ, որտեղ «մեծ քար էր, քարի տակը (Սինամը) քաղաք շինեց, անունը դրավ Սինամուտ, քարի գլոխ էալ (էլ) բերդը շինեց»¹⁶: Հիշատակված «մեծ քարը» լինելու է Խարբերդի շրջանի Մաստառ (Մաստարա) լեռը, Սինամուտը Խարբերդն է, բերդը՝ Հոռեբերդը Սինամուտ-Խարբերդի բարձրադիր մասում:

Սինամ թագավորի մասին հիշատակություններ կան ոչ միայն «Մոքոս»-ում, այլև հայ ժողովրդական մի շարք հեքիաթներում: Դրանցից պարզվում է՝ մեր ժողովրդին ծանոթ է եղել իրական թագավոր Սինամից բացի նույնանուն առասպելաբանական մի կերպար, որի երկրային անձնավորումներն են ըմբռնվել տեղի ցեղապետ-արքաները՝ կրելով նաև նրա **Սինամ** անունը: Կարծում ենք՝ որ դա կարող էր լինել արևի անձնավորում աստվածությունը, իսկ **Սինամ**-ը՝ նրա մակդիրը: Աստվածներից գլխավորի անուններն ու մակդիրները որպես գահանուններ գործածելու ավանդույթի հստակ օրինակ են տալիս Իսուվա-Ծոփքի հարևան Շուրբիայի թագավորների կրած գահանունները՝ **Քալի-Թեշուբ, Քիլի-Թեշուբ, Լիզի-Թեշուբ, Նիկ-Թեշուբ, Շերպի-Թեշուբ**, որոնց երկրորդ բաղադրիչը Ամպ-

Մարանդ, Վանանդ և այլն:

13 Stn Keilschrifturkunden aus Boghazköi", Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 43, I, 39-40 (այսուհետև՝ KUB); **Хачатрян В.**, Восточные провинции Хеттской империи («Вопросы топонимики»), Ер., 1971, с. 97 (այսուհետև՝ ВП). Խեթերենին բնորոշ -uua տեղանվանակերտ վերջածանց է առկա Ankuua, Tiruua, Dankuua, Isuua, Pahuaa, Asuua, Hasuua երկրանուններում (ВП, с. 7, 13, 54, 107, 116, 119):

14 ՏՆՎ. ВП., с. 98. Ատրեստանյան սեպագրերում հիշատակված Sinabu և Sinamu տեղանունները ուրարտագետները միևնույն բնակավայրին են վերագրում (**Арутюнян Н.**, Топонимика Урарту, Ер., 1985, с. 168-169): Եթե դա ճիշտ է, ապա գործ ունենք բ/մ համարժեքությունն արձանագրած միևնույն տեղանվան տարբերակների հետ: Հմտ. բալթիկ/մալթալ (րուսաանուններ են), բէջ/մէջ-ք, բիծ/միծ, հայ. բազմակ/ասոր. mazmak «ձրագ, աշտանակ» զույգերը և փոյուգ. փոքրաս. Bā/Mā/Má «մայր, Մայր դիցուհի» (**Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 112), թրակ. Βένδις/Benδiς/Mενδις (Георгиев В., նշվ. աշխ., էջ 114) դիցանունների տարբերակները: Sinabu/Sinamu անունների մեջ կարելի է տեսնել Սինամ թագավորի հետքը՝ հավանաբար, առկա նաև ներկայիս Սինան (<*Սինամ) բնակավայրի անվան մեջ: Այն գտնվում է Բաթման գետի աջ ափին, նրա գետաբերանի շրջանում (Բաթման քաղաքից ոչ հեռու), այսինքն՝ մոտավորապես այն տարածքում, որտեղ Sinabu/Sinamu-ն են տեղորոշում:

15 ՏՆՎ **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 63, 107:

16 «Մոքոս», էջ 4, **Գրիգորյան Գր.**, նշվ. աշխ., էջ 239, 250:

րոպի աստծու անունն է, իսկ առաջինները՝ այդ աստծու մակդիրը¹⁷: **Սինամ** անվան՝ արևի պաշտամունքի ոլորտից գալու հուշը պահպանած մեկ ուրիշ հեքիաթում ասվում է, որ Արևմուտքի «Սինամ թաքավորը հայերի թաքավոր էր ու էն թավուր դոչաղ, որ սաղ աշխարհում հատը չկար», բայց «Սինամ թաքավորը իրեն քցեց ծովը ու խեղդվեց»¹⁸: Այս Սինամի նախատիպը լինելու էր Արևմուտքում. այստեղ էին *Senaminda-ն*, *Sinamuya-ն* և *Սինամուտը*՝ իշխած և արևի երկրային անձնավորումն ըմբռնված (արևն է արևմուտքում ծովասույզ լինում) և առասպելաբանված իրական մի թագավոր: Պատմական թագավորների առասպելաբանման հստակ օրինակներից են մ.թ.ա. VI դ. Տիգրան Երվանդյանի և մ.թ.ա. II դ. Արտավազդի կերպարները:

Արևի և արևատար հսկա թռչնի միասնական (բայց ո՛չ միաձույլ) պատկերումը առկա է դեռևս վաղ շրջանի ժայռապատկերներում: Նկար 1-ում¹⁹ բերված ժայռապատկերի երկար կտուցով թռչունը լինելու է արագիլը: Հայ ժողովրդական հնագույն հանելուկներից մի քանիսը դա են վկայում: «Արեգակ» պատասխանն ակնկալող վանյան մի հանելուկում ասվում է.

**«Մեյ (մեկ) խավք մը կա իլանի (ավետաբեր),
Բարձրակտուց սիլանի (փայլուն), Կուտ կուտե երկրի,
Կերթա թառի Բերկրի»**²⁰:

Արագիլ թռչնանունը ևս իր կրողի և արևի առասպելաբանական փոխադարձ կապի վկան է՝ արագիլի «արևային» թռչուն ըմբռնվելու վկան: Հ.-ե. **reu-* արմատից են ծագում ինչպես **արև** և **արեգ** բառերը, այնպես էլ **արագ** արմատը, «որից *y* նախդիրով ունինք հին և ընտիր մի բառ՝ **յարագել** «արևի առաջ դնել»²¹, գրում է Հ. Աճառյանը: Այս նույն արմատից է նաև **արագիլ** <*արագ-իլ բառը, որում արմատին հավելված է **-իլ** (< h.-ե. **-elo*)²² վերջածանցը: Վերջինս առկա է նաև **անձեղ/անձեղ, տառեղ-ն, բորեղ/բոռեղ, մաթիլ, որջիլ** և այլ բառերում:

Մերձավորարևելյան հասարակություններում արևապաշտ-«արևածնունդ» միապետների միահեծան դիրքերի ամրապնդումով երևան եկած պետական պաշտամունքներում «արևային» թռչնի դերում արագիլի փոխարեն սկսեցին ըմբռնվել գիշատիչ (նաև բարձրաթռիչ, սրընթաց, սրատես) թռչունները: Բուդինի հավաքածուի (ԺՆՆ, Շվեցարիա) ուրարտական բրոնզե թիթեղի խորհրդանիշերից վերևինն ու խոշորը արևի այդպիսի թռչնա-



Նկ. 1

17 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Թեշուրի հայկական մակդիրները գահանուններում, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր. Նվիրվում է Հրաչյա Աճառյանի ծննդյան 135-ամյակին (Գյումրի, 5-6-ը մայիսի, 2011)», Գյումրի, 2011, էջ 12-17:

18 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. III, Եր., 1962 էջ 274-282:

19 Տե՛ս **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 6, Եր., 1971, աղ. 230:

20 **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 4:

21 **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. I, Եր., 1971, էջ 311:

22 Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հատ. I, էջ 218; “Этимологический словарь русского языка”, т. II, вып. 8, М., 1982, с. 187.

թև սկավառակ է՝ գահին բազմած Արևի աստծու խորհրդանիշը²³: Այս տեսանկյունից պետք է քննարկել **Սինամ** գահանվան՝ նախապես դիցանվան, ստուգաբանության հարցը:

Սինամ<***սին**-ամ անվան մեջ առկա է ***սին** արմատը և **-ամ** անձնանվանակերտ-դիցանվանակերտ վերջածանցը (վերջինիս համար հմմտ. **Արամ, Արգամ, Գեղամ, Կառնամ, Պասքամ** անձնանունները): ***Սին** արմատը հնչյունական տարբերակն է **ցին** գիշատիչ թռչնի անվան՝ ծագած հ.-ե. *kīno նախաձևից, որից են նաև հուն. ikṭinos «ցին», հին հնդկ. śyēnā «արծիվ, բազե», ավեստ. -saēna «խոշոր գիշատիչ թռչուն» բառերը²⁴: ***Սին**-ը «ցին» իմաստով առկա է նաև **արսին**<***ար**-սին «ցին, ուրուր» բառում²⁵: Սրա **ար**- բաղադրիչի համար հմմտ. **արου** և **արոր** թռչնանունները՝ հավանաբար, ծագած հ.-ե. *(H)or- արմատի ստորին *(H)ṛ- ձայնադարձից (արմատակիցներից հմմտ. հայ. **որոր, ուրուր**, հուն. ὄρνις «թռչուն, հավ, աքլոր», հին իռլ. irar, բրետ. erer, գոթ. ara, հրգ. aro, լիտվ. erēlis, ռուս. орел «արծիվ») ²⁶:

«Յինային» ստուգաբանությամբ **Սինամ** դիցանունն ունի արևի պաշտամունքի հետ սերտ առնչություն բացահայտող առասպելական էակների իր անվան կրկնորդ անունները՝ **Սինամահավք**-ը և սրա տարբերակները: Հեքիաթներից մեկում պատմվում է, թե ինչպես վիշապասպան հերոսը Անմահական խնձորի համար հասել էր Սինամ հավքին: Հավքը նրան ասել էր. «Ըշտե ես Սինամ հավքն իմ օր կամ: Իդա (այդ) դիմացի բարձր սար կը տեսնամ, էդ լե Սինամա սարն է, էդ սարի վրեն մեկ թաք ծառ կա, էդ ծառի վրեն տարին յոթ խնձոր կը հասնի, ըշտե Անմահական խնձոր օր կսեն էդ է»²⁷: Սինամա սարի և Սինամա հավքի անուններն իրենց կրողներին առնչում են «Միքոս»-ի Սինամ թագավորին և նրա Սինամուտին:

Մեկ ուրիշ հեքիաթում առասպելական թռչունը վիշապասպան հերոսին ասում է. «Ես, վոլյա, Սինամ թագավորի արծիվն իմ»²⁸: Այս խոսքերից պարզ է դառնում, որ այսպիսի (նաև իր նման) թռչունները ոչ թե իրենք Սինամն են, այլ Սինամի թռչուններն են: Ուրեմն, կասկած չկա, որ **սինամ(ա)հավք** կոչվել է Սինամ թագավորի (առասպելաբանության մեջ՝ աստվածության) թռչունը: Առասպելական այս թռչունի անվան արմատակիցներն ու իմաս-

23 Տե՛ս **Barnett R.**, The hieroglyphic writing of Urartu, "Anatolian Studies presented to H. G. Güterbock", Istanbul, 1974, p. 43-55; **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 34-37: 24 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, Եր., 1979, էջ 455, **Գամքրելիզե Թ., Иванов Բ.**, նշվ. աշխ., հատ. II, էջ 538:

25 Տե՛ս «Բառագիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները **Հ. Ամայյանի**, Եր., 1975, էջ 40:

26 ՀԱԲ, հատ., III, Եր., 1977, էջ 618: Հ.-ե. *(H)ṛ-ից ծագած *ար- արմատն է պարունակում նաև արալեզ (տարբերակները՝ առլեզ, արալեզ, յարալեզ) բազմաշարժար բառը: Կարծում ենք, որ «շնից սերված» արալեզները (**Եզնիկ**, գլ. ԻԳ, ԻԵ) թռչնաթև-արծվաթև ըմբռնվելու պատճառով նախ կոչվել են *արիլ՝ կենդանիների անուններում հանդիպող -իլ վերջածանցի հավելումով, ապա անվանը կցորդվել է -էզ վերջածանցը (հմմտ. բզէզ, դզէզ, խլէզ, ձլէզ): *Արիլ-էզ ձևում անշեշտ -ի ձայնավորի անկումով ստացվել է *արլէզ, որից՝ առլէզ/առլեզ, իսկ Արա Գեղեցիկի անվան ազդեցությամբ՝ արալեզ/արալեզ, նրա առասպելի մեկնաբանումով՝ յարալէզ: Հ.-ե. *(H)er-/*(H)or-/*(H)ṛ- արմատից ծագած «թռչուն» և «արծիվ, բազե» նշանակող բառերը: Տե՛ս **Գամքրելիզե Թ., Иванов Բ.**, նշվ. աշխ. հատ. II, էջ 538 և ՀԱԲ, հատ. III, էջ 618:

27 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Եր., 1967 էջ 112-113: Հեքիաթային Սինամա սարի անմահական խնձորներ տվող «թաք»//Կենաց ծառի և հարսանեկան Պսակի ծառի առասպելաբանական նույնացումը իր արտացոլումն է գտել հարսանիքից հետո նորապսակների հասցեին արվող մաղթանքում. «Սինամա ծառ էղնի, ծյուղ տա» (Բիթլիս): Տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ., IX, Եր., 1968, էջ 402:

28 Նույն տեղում, հատ., XI, Եր., 1980, էջ 135:

տակիցներն են ավեստ. *saēno-mərəgo*, պահլ. (միջին պարս.) *sēn-i-murūk*, պարս. *sīmurγ* բառերը՝ անունները նույնպես թռչնաթև առասպելական էակների: Բայց, ի տարբերություն սինամահավքերի, դրանք ոչ թե առյուծի, այլ շան խառնածին են²⁹:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» **սիանահավք** բառը ունի հետևյալ բացատրությունները. «Չինաստանի թռչուն, սիրամարգ», իսկ հեքիաթներում՝ «առասպելական ուժեղ թռչուն, զմռութ դուռ», ստուգաբանությունն է *Sin* «Չինաստան» + իրան *marg* «թռչուն»³⁰: Ըստ Հ. Աճառյանի՝ մեր սիրամարգ բառը իրանական վերոհիշյալ ձևերից է գալիս **սինամարգ-սիրամարգ** միջանկյալ օղակներով, թեպետև «սինամարգը առասպելական մի թռչուն է և ո՛չ «սիրամարգ»³¹: Այս տարբերությունը բացառում է ուղղակի կապի գոյությունը մեր **սինամ(ա)հավք**-ի և իրանական վերոհիշյալ բառերի միջև: Ծայրահեղ դեպքում խոսք կարող է լինել օտարածին **սիրամարգ** և բնիկ սինամ(ա)հավք բառերի՝ հայերենում տեղի ունեցած բաղարկության մասին, մանավանդ որ, ինչպես է. Աղայանն է նշում. «բացառվում է **մարգ** «թռչուն» բառի ինքնուրույն գործածությունը հայերենում»³²:

Այդուհանդերձ, բացառված չէ գոյությունը հայ. և իրան. բառերի զուգահեռ կապի՝ պայմանավորված հնդեվրոպական ընդհանուր ծագումով: Դա է վկայում **ցին**-ի ***սին** տարբերակի գոյությունը՝ ավեստ. *saēnō*-ի նման առավել հարազատորեն վերարտադրած *h.-ե. *kīno* նախաձևը, քան **ցին**-ը (*h.-ե. *k-* բառասկզբում վերածվում է սովորաբար *s-*ի ինչպես իրանական լեզուներում, այնպես էլ հայերենում): **Սինամ**՝ որպես անձնանուն, աստվածաշնչյան **Սենեքերիմ** անունից բխեցնող տեսակետը ևս հիմնավոր չէ թեկուզև այն պատճառով, որ այն անխզելի իմաստաբանական և լեզվաբանական կապի մեջ է **սինամահավք**, **Սինամուտ**, **Սինամասար** բառերի հետ, որոնց ***սինամ** հիմքը վկայված է դեռևս սեպագիր արձանագրություններում:

Սինամահավքերը հաճախ գույգ էին ըմբռնվում՝ որպես Վեներա, (Արուսյակ) մոլորակի երկու դրսևորումներ, որպես Լուսաբերի (արևածագին) և Գիշերավարի (մայրամուտին) խորհրդանիշեր: «Արեգակ» պատասխանն ակնկալող Կարճկանի (Մոկս) հանելուկում ասվում է.

**«Երկու օսկի լայլակ (արագի),
Առավոտման գանգեր տվին, ընցան ծովու վրեն,
Իրիկուն վերջացան»**³³:

Անկասկած, այս թռչունների առասպելաբանական համարժեք սինամահավքերն են պատկերված Արևի և Կենաց ծառի խորհրդանիշերի շրջապատում Գյումրուց հայտնաբերված ուրարտական դարաշրջանի գոտու բեկորին (Նկ. 2)³⁴: Այստեղ նրանք հանդես են գալիս որպես Արևի աստծու

29 Տե՛ս *Лелеков Л.*, Смурґ, “Мифы народов мира”, т. II, М., 1988, էջ 436 – 437.

30 *Մալխասյանց Ստ.*, Հայերեն բացատրական բառարան, հատ. IV, Եր., 1945, էջ 214:

31 ՀԱԲ, հատ. IV, էջ 219:

32 *Աղայան է.*, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 68:


33 *Հարությունյան Ս.*, նշվ. աշխ., էջ 4:

34 Տե՛ս *Хачатрян Т.*, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., Ер., 1975, с. 19, рис. 3, տես նաև

ուղեկիցներ և Կենաց ծառի պահապաններ: Դարձյալ «արեգակ» պատասխանն ակնկալող շատախյան հանելուկում արտացոլված են այդ հանգամանքները.

**«Ձի (ինձ) ծառըն կեր Հնդաց քաղաք,
ձղիր թալեր (գցել) էր քաղքէ քաղաք,
Համեն ձղին սինամոր խավք»³⁵:**

Հանելուկի առասպելաբանական հենքը իր գեղարվեստական ձևավորումն է գտել բերված նկարում. կենտրոնում՝ Կենաց ծառով, դրա վերևում՝ Արեգակի խորհրդանիշով և վերջիններին շրջապատած սինամահավքերով:



Նկ. 2

Առասպելաբանության սինամահավքերն իրենց տիրակալի՝ թռչնաթև արևի երկրային անձնավորում Սինամ թագավորի նման իրենց հետքն են թողել հնագույն Ճոփքի տեղանուններում: Այդ տեղանուններից մեկն է **Հոռէբերդ**-ը՝ իր «թռչնային» ստուգաբանությամբ: Նկատի ունենալով բարձունքներին տրված այդպիսի անունները (հմնտ. **Ագռավաքար, Ծիծեռնակաբերդ, Կաչաղակաբերդ, Կարավաբերդ**)՝ **Հոռէբերդ**-ի **Հոռէ** բաղադրիչի հիմքում կարելի է տեսնել ***հոռ** արմատը: Է. Աղայանի հիմնավոր կարծիքով, հայկական հին տոմարում նավասարդին հաջորդող հոռի և սահմի ամիսների անուններում առկա են հունական առասպելաբանության Դեյմոս և Փոբոս («Ահ և Սարսափ») զույգի համարժեքների **Հոռ** և **Սահմ** անունները, որոնցից երկրորդը հիմքն է նաև **սահմուկել**՝ «սարսափել» բառի³⁶: Սահմի զուգակից Հոռի անունն էլ կարելի է բխեցնել հ.-ե. *Hor- արմատից, որից ծագած բառերը ժառանգ լեզուներում ունեն «թռչուն, բազե, արծիվ» իմաստները. հմնտ. հայ. նույնարմատ **որոր, ուրուր** բառերը³⁷: **Հոռէ-բերդ** տեղանվան մեջ ***հոռէ** կարող էր առաջանալ ***հոռ** «արծիվ» արմատից այնպես, ինչպես ունենք ***բազ>բազէ, *բոր>բորէ, «բորենի», *կուր>կրէ** «կրիա» (բրբ), ***պախր>պախրէ: *Հոռ** և ***Սահմ** զույգի անունը միասնաբար ունեն «թռչուն-սարսափ» իմաստը:

Սինամահավքերի պաշտամունքի հետքը Ճոփքում պահպանված է նաև «Միբոս»-ում հիշատակված **Կորձընա մորի** կոչված անտառի (մօրի//

³⁵ **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 87, նկ. 9, էջ 99, նկ. 10 և **Piotrovsky Boris**, Ourartou, Archaeologia Mundi, edit. Nagel, Genève, 1970, illust. N 84: Վերջինիս կարծիքով՝ Հայաստանի պատմության թանգարանում պահվող այս նմուշը հայտնաբերվել է Անի-Պենգայի հնավայրից (նույն տեղում, էջ 215): Գոտու բեկորի վերակազմությունը՝ Սարգիս Գ. Պետրոսյանի և Լևոն Ա. Մինասյանի: 35 **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 4:

³⁶ **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 60-61:

³⁷ ՀԱԲ, հատ. III, էջ 618: Տե՛ս նաև **Гамкредидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հատ. II, էջ 538: Այս հնդեվրոպական արմատը *որ տեսքով առկա է նաև սինամահավքին վերաբերող վանյան սինամոր հաք և տարոյան հավորեկ բառերում: Տե՛ս **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 4 և «Հայ ժող. հեքիաթներ», հատ. X, էջ 67-68: Սինամոր<*սինամ+որ «թռչուն», իսկ հավորեկ<*հաւ + որ «թռչուն» + եակ գգվական վերջածանց է: Այս *որ «թռչուն, հավք» արմատը կա նաև որի «մի տեսակ ագռավ» (ՀԱԲ, հատ. III, էջ 618) բառում. որի < *որ «թռչուն» + ի վերջածանցը:

մայրի, մերի) անվան մեջ³⁸: **Կորձընա**–ն սեռ. հոլովածն է ***կորձին** բառի, որը, մեր կարծիքով, սինահավքին տրված մեկ այլ անվանում է եղել: Այն բաղկացած է **կորձ** հիմքին **–ին** վերջածանցի (հմմտ. **ամուս–ին, դարբ–ին, լուս–ին, խոր–ին** և այլն) հավելումով: **Կորձ** նշանակում է «պասկում. ազգ. կորակտուց և գիշակեր թռչնոյ՝ նման արծուայ և անգեղ, ցրսփ, gryps, gryphus»³⁹:

Հունաստանում հին հոնիացիներին հայտնի նման առասպելաբանական էակներ էին գրիֆոնները, որոնք համարվում էին հեռավոր բարձրաբերձ լեռների ոսկու պահապաններ: Առասպելաբանական այս կերպարները հունական ծագում չունեին և ներմուծված էին Մերձավոր Արևելքից⁴⁰: Բայց թե՛ այստեղ, թե՛ այստեղ նրանք համարվում էին Արևի և նրա անձնավորում աստվածությունների խորհրդանիշերը⁴¹:

Սինամահավքերի արծվաթև և արծվագլուխ պատկերացումը ինքնին հասկանալի է: Բայց նրանք ինչու՞ են առյուծամարմին: Չէ՞ որ առյուծը անդրաշխարհի էակ էր համարվում՝ արջին ու գայլին հավասար: Հայկական հեքիաթներում դրա բազմաթիվ հաստատումներ կան: Դրանցից մեկում անդրշիրիմյան աշխարհում հայտնված արևաբնույթ հերոսի «աղաքը ընկավ մի բարակ ճամփա, ու գնաց, գնաց, մուրթն ընկավ մի գաղի (քարանձավ) մեջ. գնաց պուճախում (անկյուն) պառկավ: Քիչ մնաց, տեսավ մի առջ էկավ՝ պառկավ: Քիչ մնաց, մի գեղ էլ էկավ. մի քիչ մնաց, մի ասլան (առյուծ) էլ եկավ»⁴²: Այդուհանդերձ, առյուծը ևս թռչնի նման առնչվել է արևին: Դրա պատճառները եղել են հետևյալները: 1. Մայր մտած արևը պատկերացվել է մինչև արևածագ ընդերքում արևմուտքից արևելք շրջագայելիս: 2. Առյուծի շիկակարմիր մորթը հիշեցնում է արևի գույնը՝ արևածագին և մայրամուտի: 3. Հ.–ե. *reu– արմատը՝ որպես գոյական, «արև», է նշանակել, որպես բայ՝ «մոնչալ, ոռնալ»: Հայերենի օրինաչափությամբ սրանից ունենք **արև** բառը (հմմտ. հին հնդկ. ravi– «արեգակ»), բայց նաև **առևծ/առիւծ** բառը՝ «առյուծ» (< «մոնչացող». հմմտ. հուն. ὄρουμος «մոնչյուն») նշանակությամբ⁴³:

Ըստ երևույթին, հ.–ե. *reu– արմատների հնչյունական նույնությունը հանգեցրել է առյուծի ընկալմանը՝ որպես արևի ընդերքային խորհրդանիշի, և Արևի երկնային–թևավոր ու ընդերքային–առյուծային խորհրդանիշերի սերտաձմանը: Արդյունքում ստեղծվել են թևավոր առյուծների և արծվաառյուծների խառնածին կերպարներ: Հայկական ավանդություններից մեկի համաձայն՝ «Արևը առյուծի մեջքին նստած սլանում է երկնականարի վրայով և երեկոյան գնում հանգստանում է մոր գրկում: Առյուծն իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից»⁴⁴: Սա արդեն թևա-

38 Տե՛ս **Գրիգորյան Գր.**, նշվ. աշխ., էջ 248:

39 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. I, Եր., 1979, էջ 1120:

40 Տե՛ս **Пянков И.**, Бактрийский гриф в античной культуре, “История и культура народов Средней Азии”, М., 1976, էջ 19–20, 21–22.

41 Տե՛ս նույն տեղում, էջ 24:

42 “Հայ ժողովրդական հեքիաթներ”, հատ. III, Եր., 1962, էջ 126:

43 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 259, 311, հ. III, էջ 565: Հնդեվրոպական շատ լեզուներում կենդանիների բուն անվան փոխարեն նկարագրական անվանումների գործածումը թարրի հետևանք է (հմմտ. ՀԱԲ. հատ. I, էջ 334, հ. IV, էջ 611–612):

44 **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 4:

վոր-թռչնաթև-արծվաթև առյուծն է: Այսպիսի պատկերացումների հետևանքով սկզբնապես հսկա արծիվ ըմբռնված շումերական առասպելաբանության քամու անձնավորում Անգուդը (աբադ. Ինդուգուդ-Im-dugud «մրրիկ-քամի») ըմբռնվել է նաև առյուծագլուխ արծիվ⁴⁵:

Anzud<*anz-ud անվան առաջին բաղադրիչը նույնական է հայ. **անձեղ/անձեղ** («կաշաղակի մի տեսակ») բառի **անձ-**/**անձ-** բաղադրիչի հետ, որովհետև **ձ-**ն սեպագրությամբ կարտահայտվեր որպես z. հմնտ. **Alzi/Alzini/Աղձնիք**, Abzu<*ab-zu/ **ձուկն-ձու-կն**⁴⁶: Կարծում ենք, որ **անձեղ** բառի և Anzud դիցանվան հիմքում հ.-ե. *ang'h- արմատն է՝ **-եղ** և **-ud** վերջածանցների հավելումով: Առաջինը, ինչպես վերևում նշվեց, ծագում է հ.-ե. -elo⁴⁷ վերջածանցից, իսկ երկրորդի համար հմնտ. **-ոտ/ուտ** (հայ. **տ** < հ.-ե. *d) վերջածանցը: Մեր **անձեղ**-ի և շումեր. Anzud-ի արմատակիցներն են լինում հայ. **անձն** (<հ.-ե. *ang'hen<*anē «փչել, շնչել»), հուն. ἀνεμος, հին հնդկ. ánita «քամի», լատին. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», animus «հոգի» բառերը⁴⁸: Անձեղ թռչունի և քամու առնչության առթիվ էլ նշենք, որ սա լրաբեր թռչուն է, ինչպիսի հավատալիք կար նաև քամու վերաբերյալ (օրինակ՝ «Սասնա ծռեր»-ում):

Առյուծագլուխ Անգուդը իր տեսքով հիշեցնում է հայկական հեքիաթների Ջմուռ ղուշը՝ սինամահավքի առասպելաբանական խառնածին կերպարի տարբերակը⁴⁹: Այս ղուշ//«հավք»-ը **Ջմուռթ**<***գ-մուռթ** է կոչվել թռչնային կտուցի փոխարեն գազանային, կարծում ենք՝ առյուծի մուռթ ունենալու պատճառով (***գ-մուռթ** բառում **գ-**ն սաստկական նախածանց է): Հեքիաթներից մեկում Մուրթ//ընդերքային աշխարհում հայտնված արևաբնույթ հերոսը՝ թագավորի երեք որդիներից կրտսերը, Ջմուռթ ղուշի ձագերին կուլ տալ ցանկացող վիշապ օձին սպանելով, այդ լավության դիմաց նրան խնդրում է իրեն հանել Լույս աշխարհ⁵⁰: «Տղեն նստում ա Ջմուռու ղշի մեջքին. քառասուն տիկ ջուրը, քառասուն հատ դմակն էլ դնում ա վրեն: «Բու՛» ա անում՝ ջուր ա քցում, «ղի՛» ա անում՝ դմակը: Ըսենց գալիս են, գալիս՝ հասնում Լիս աշխարք: Ջմուռու ղուշը ըստե տղին վեր ա դնում, ինքն էլ եղ թռնում, գալի Մուրթ աշխարքը»⁵¹: Կարծում ենք՝ այս տեսանկյունից պետք է դիտարկել Քարաշամբի հնավայրից (Արարատյան դաշտի նախկին Նաիրիի շրջան) հայտնաբերված և մ.թ.ա. XXII-XXI դարերով թվագրվող արծաթե գավաթին առյուծագլուխ մի արծիվ պատկերված լինելու հանգամանքը: Քանի որ առասպելական այս էակը պատկերված է երրորդ գոտում՝ գլխատված գինվորների հետ, ուստի ենթադրվել է, որ նա սրանց անդրաշխարհ ուղեկցող առյուծագլուխ Անգուդ արծիվն է⁵²: Այդուհանդերձ, բացառված չէ, որ սա լինի հայ

45 Տե՛ս **Афанасьева В.**, Анзуд, “Мифология. Золотой фонд. Энциклопедия”, М., 2003, էջ 46.

46 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Հայ-շումերական առասպելաբանական աղբյուրների շուրջ, «ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ», հատ. XIV, եր., 2011, էջ 9:

47 Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հատ. I, էջ 218, “Этимологический словарь русского языка”, т. II, вып. 8, էջ 187.

48 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 203:

49 Տե՛ս **Սալխայանց Ստ.** նշվ. աշխ., հատ. II, եր., 1944, էջ 28, հատ. IV, էջ 214:

50 Տե՛ս «Հայ ժող. հեքիաթներ», հատ. II, եր., 1959, էջ 29-32:

51 Նույն տեղում, էջ 33:

52 Տե՛ս **Փիլիպոսյան Ա.**, Քարաշամբի գավաթի տեսարանները որպես հնագույն առասպելի խորհրդանշային դրսևորումներ, «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ» միջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, եր., 2007, էջ 51:

առասպելաբանությունից հեքիաթներ փոխանցված Զմռութ ղուշը՝ առյուծամռութ հավքը: Առյուծաբնույթ արևի ուղեկիցներն ու հանձնակատարները համարված առասպելական այս կերպարները նրա հետևությամբ են ձեռք բերել առյուծային բնույթ և առյուծի մանրամասներ:

Հայկական լեռնաշխարհում Ծոփքը այն միակ տարածքն է, որտեղ անգամ VII դարում գոյություն ունեին առյուծներ, նաև նրանց համար առատ սնունդ ապահովող որսի կենդանիներ, նաև արծվառյուծների, թռչնաթև առյուծների խառնածին կերպարների երևան գալուն նպաստող տարատեսակ թռչուններ: «Աշխարհացոյց»-ում կարդում ենք. «Երկրորդ աշխարհ [Մեծին] Հայոց Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն... ունի Չորրորդ Հայք **երէս և հաւս, և ի գագանաց գառնեծ**»⁵³:

Ամենայն հավանականությամբ, Զմռութ ղուշի և շումերական Անգուդի նման կերպարների առաջացման և փոխազդեցության գործում ևս իր միջնորդական դերն է ունեցել հնագույն Ծոփքում հաստատված շումերական գաղթօջախը:

Սարգիս Գ. Պետրոսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայկական լեռնաշխարհում դասերի առաջացման խնդիրները, հայ և հնդեվրոպական մյուս ժողովուրդների հնագույն պատմությանը, բանահյուսությանը, հատկապես առասպելաբանությանը վերաբերող հարցերը:

Summary

HISTORY AND MYTHOLOGY IN THE EPICAL IMAGE OF KING SINAM

Sargis G. Petrosyan

Keywords – the Armenian Highland, Sophene, Mesopotamia, Sumer, Armenian-Indo-European roots, Akkadian, Hittite inscriptions, legend, popular belief, the road along the Euphrates, mythological, theonym, heliolater, with eagle’s wings, with a lion’s head, Peacock, The Firebird.

In the Sophenic folk novel “Mokos” it is told how the 12 sons of the Mesopotamian King Bagh (Bal) came to Armenia and became independent kings in Sophene and adjoining territories. From this point of view it is noteworthy that in the present-day region of Keban there used to exist a settlement of migrants of the Sumeric Uruk IV civilization (3500–3100 BC). According to the “Mokos” some of those twelve “sons” were Armenians, and one of them, Sinam, was the founder of the city of Sinamut, later – Kharberd. The name Sinam is also found in the Shenaminda (<*Sinam-inda) and Sinamuna (<*Sinam-una) cuneiform toponyms which are all of Indoeuropean-Armenian origin.

53 **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 107:

In the epical image called Sinam the historical and mythological features of his prototypes are merged. His historical prototype (or prototypes) was a king (or kings) who reigned in ancient Sophene and whose kingdom included both the present-day Keban with its adjacent area and Kharberd with its surroundings. The imagination of the border-lines of Sinam's kingdom is mentioned in the following record made by the king of Akkad. Akkadian king Naram-Sin (2236–2200 BC) “(that) year when Naram-Sin reached the springheads of the Euphrates and the Tigris he defeated the country of Shenaminda”. Here the Euphrates is the Western Euphrates, the Tigris is the Western Tigris and the area between their springheads is Sophene.

The mythological prototype of the epic King Sinam is, to our mind, the God of the Sun, called Sinam because of his bird symbol–eagle. The words of the same root with Sinam are the Armenian tsin “black kite”, Greek ἰκτίνοϛ, Old Indian (Sanskrit) śyēnā “eagle, falcon”, Avestian saēna “a big bird of prey”. The two companions of the Sun, the two manifestations of Venus sometimes at dawn and sometimes at sunset, also had their bird symbols. In the Armenian mythology they were considered the birds of king Sinam and were called Sinamahavk (Sinam's bird) or for short Sinam-havk.

Резюме

ИСТОРИЯ И МИФОЛОГИЯ В ЭПИЧЕСКОМ ОБРАЗЕ ЦАРЯ СИНАМА Саркис Г. Петросян

Ключевые слова – Армянское нагорье, Цопк, Месопотамия, Шумер, армяно-индоевропейские корни, аккадский, хеттские надписи, легенда, поверье, путь вдоль Евфрата, мифологический, теоним, солнцепоклонник, с орлиным крылом, с львиной головой, Павлин, Жар-птица.

Среди стран Армянского нагорья в аккадских источниках упоминаются и страна Шенаминда/Сенаминда (хетт. Исува, арм. Цопк, антич. Софена). Когда-то она возглавляла союз племен юго-западной части Армянского нагорья. Там родился и позднее оформлялся “Мокос” – народное сказание Цопка. По “Мокосу”, в древности именно там жили 12 легендарные правители–синовья месопотамского царя Бага–основателя города Багдад. Несомненно, образ этого царя есть поздняя замена образов царей древнего Шумера. Дело в том, что шумерская культура Урук-IV (3500–3100 гг. до н. э.) вверх по Евфрату проникла в древнейший Цопк (в район нынешнего Кебана). Шумерская колонизация по Евфрату дала шумерийцам возможность вступить в торговые и культурные взаимоотношения с предками армян Цопка. Паралельные образы греческой мифологии Деймоса и Фобоса у армян назывались также Միսիմիհիմիցր (Синамахавк–«птицы Синама»). Согласно “Мокосу”, Синам–основатель города Синамут (позд. Харберд в Цопке), а также некоторые из сыновей царя Бага были армянами. С этой точки зрения интересно, что топоним Синамут (<*Синам–ут) наряду с клинописными топонимами Синамува (<*Синам–ува) и Сенаминда (<*Сенам–инда) этимологизируются на индоевропейско–армянской почве.